

Հայաստանի Ազգային ժողովին մէջ երէկ հանդիսարար արարողութեամբ տեղի ունեցաւ Սահմանադրական դատարանի նորընտիր անդամ Կիմ Բալայեանի երդման արարողութիւնը:

Բալայեան երդուեցաւ «ըլլալ անաչառ, բարձր պահել Սահմանադրական դատարանի անդամի պատիւը եւ պաշտպանել Հայաստանի Սահմանադրութիւնը»:

Կիմ Բալայեան Սահմանադրական դատարանի անդամ ընտրուած էր խորհրդարանի որոշումով:

Համաձայն օրէնքին, երդման արարողութեան ներկայ գտնուեցաւ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան:

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԻՆ ՇԵՇՏԸ ԴՐՈՒԵՑԱՒ ԵՐԿՐԻՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Խորհրդարանը երէկ գումարեց իր լիագումար նիստը, որուն ընթացքին գլխաւորաբար քննարկուեցին առարկայ դարձաւ Լիբանանի երկրագործական մարզը պահպանելու, վարձագնելու եւ լիբանանցի երկրագործներուն շահերը ապահովելու յատուկ ծրագիր մշակելու անհրաժեշտութիւնը:

Հանդարտ մթնոլորտի մէջ կայացած նիստին ընթացքին քննարկուեցան երեսփոխաններ Պուրոնու Հարպի, Ֆարէտ Խալիլի եւ Պէքաւի երեսփոխաններուն անունով ձայն առած Էլի Ֆրայլիի հարցադրումները, որոնք յատկապէս կը վերաբերէին լիբանանեան երկրագործութեան եւ անոր ձակարկներին:

Երեսփոխան Պուրոնու Հարպի վարմանը յայտնեց, թէ երէք տարի առաջ արծարծուած երկրագործութեան մարզը ոչ մէկ փոփոխութիւն կրած է եւ այսօր անհկա կը գտնուի բաւական վտանգաւոր կացութեան դիմաց: Ան նկատել տուաւ, որ եթէ իրավիճակը այսպէս շարունակուի, աւելի լուրջ հարցեր պիտի ստեղծուին եւ արտագաղթն ու աղքատութիւնը պիտի բազմապատկուին: Ան կոչ ուղղեց այս մարզը լրջօրէն սերտելու եւ երկրագործները ապահովագրելու:

Երեսփոխան Խալիլի նշեց, թէ Լիբանանի նման երկրի մը մէջ ընդունելի չեն այն արտայայտութիւնները, թէ վրօսաշրջութեան մարզը աւելի առաջնակարգ է եւ անոր յաւելեալ յատկացումներ պէտք է կատարուին, քան՝ երկրագործութեան եւ ճարտարարուեստին: Ան դիտել տուաւ, թէ լիբանանցի երկրագործին իրաւունքները ոտնակոխուած են եւ պետութիւնը եթէ նախապէս հետապնդէր խնձորի արտադրութեան եւ արտածման պարագան, կացութիւնը այսօր այս աստիճանի պիտի չհասներ:

Երկրագործութեան նախարար Ալի Հասան Խալիլի երկրագործութեան կացութեան մասին խօսելով ըսաւ, թէ ինք այս մարզին վարձագնման համար ծրագիր մը ներկայացուցած է նախարարաց խորհուրդին, որպէսզի կարելի ըլլայ լիբանանեան երկրագործութեան մակարդակի բարձրացնել եւ առեւտրական աւելի լայն հորիզոններ ստեղծել:

Խորհրդարանը նաեւ արծարծեց շողգամի ցանքը քաջայերելու կարելիութիւնները եւ այս մարզի բարգաւաճման համար նոր ծրագիրներու մշակումը:

Վարչապետ Հարպի կոչ ուղղեց համադրել սեփական եւ հանրային բնագաւառներուն միջեւ գործակցութիւնը եւ երկրագործական ու ճարտարարուեստական մարզերուն յաւելեալ ուշադրութիւն դարձնել:

Այսօրուան նիստին խորհրդարանը պիտի քննարկէ ելեւմուտքի նախարար Ֆուատ Սիւրիայի եւ նախկին նախարար Շահէ Պարսունեանի թղթածրարները:

## ՀԱԿԱՌԱԿ ՍԱՏՏԱՄ ՀԻՄՆԵՅՆԻ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ

### ԸՆԴԴԻՍԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ՊԱՂՏԱՏԻ ՄԵՋ ԵՐԿՈՒ ՊԱՅԹՈՒՄՆԵՐ ՊԱՏՃԱՌԵՑԻՆ 8 ՁՈՇ, 17 ՎԻՐԱՒՈՐ

Սատտամի ձեռքաւորութեամբ Իրաքի մէջ կայունութիւն ու ապահովութիւն հաստատելու յոյսերը տակաւին հեռու կը մնան իրագործուելէ: Արդարեւ, Իրաքի նախկին ղեկավարին ձեռքաւորութեան հապի քսանչորս ժամ անցած՝ երկու յարձակումներ ուր զոհ եւ 17 վիրաւոր պատճառեցին Պաղտատի մէջ, երկու ոստիկանատուներու դիմաց: Ոստիկանատուները վերջերս դարձած են նախընտրելի թիրախները ոմբահարներուն:

Առաջին գործողութիւնը տեղի ունեցաւ Չուհուր թաղամասին ոստիկանատան դիմաց, ուր անձնասպանական գործողութիւն մը տեղի ունեցած է: Ոստիկանութեան աղբիւր մը յայտնեց, որ ականուած ինքնաշարժը պայթեցաւ՝ ուր զոհ եւ 13 վիրաւորներ խլելով: Չուհուր թոլորը ոստիկաններ են:

Առաջին պայթումէն հապի քանի մը վայրկեան ետք, երկրորդ պայթում մը տեղի ունեցաւ մայրաքաղաքին արեւմտեան ծայրամասին մէջ, ուր չորս ոստիկաններ վիրաւորուեցան: Երկրորդ գործողութիւնն ալ ականուած ինքնաշարժով անձնասպանական արարք մըն էր:

Մինչ այդ, Իրաքի նախկին բռնատէրը բանտարկուած է Պաղտատի մէջ, ուր երէկ այցելութիւններ ստացաւ իշխող խորհուրդի երեք անդամներէ: Անոնք ըսին, որ Սատտամ վարկաբեկուած կը զգայ, սակայն կը փորձէ ցոյց չտալ: Անոնք աւելցուցին, որ հակառակ իր վարկաբեկիչ ու նուաստացուցիչ վիճակին, ան տակաւին կը յայտնէ, թէ չի զղջար գործած արարքներուն ու ռճիրներուն համար: Իշխող խորհուրդի անդամները ըսին նաեւ, որ յատուկ ատեան մը պիտի յառաջացուի՝ դատելու համար Սատտամը:

Ամերիկացի պատասխանատուներ, որոնք սկսած են հարցաքննելու Սատտամը, կ'ըսեն, որ ան կը պատասխանէ իրեն ուղղուած հարցումներուն, թէ ան ան ցարժ կը պարզէ որ հաւաքական քանդուածի պէնքեր չունէր եւ թէ Ուաշինկթըն ալ պատրուակը օգտագործած է պատերազմ յայտարարելու համար Իրաքի դէմ:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸԱԿԱՂԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

Իրաքի երբեմնի սարսափալից ու ղեկավարին անձնատուութիւնն ու ձեռքաւորութիւնը կը շարունակէ հակադարձութիւններ խլել շրջանային թէ միջազգային գետնի վրայ: Շատերու համար տակաւին անհասկնալի կը նկատուի այս ձեռք անձնատուութիւնը, երբ կ'ենթադրուէր, որ Սատտամի նման ղեկավար մը, որ ամբողջ երեսնամեակ մը զինուորական բռնատիրութիւն հաստատած էր, պիտի նախընտրէր անձնասպան ըլլալ, քան իյնալ ամերիկացիներուն ձեռքը եւ պատկերասփիւռի ոսպնեակներուն դիմաց ամօթալի ելոյթ մը ունենալ:

● ԾՈՑԻ արաբական երկիրները ողջունեցին ձեռքաւորութիւնը Սատտամի, որուն իշխանութիւնը տարիներով պիտի քայտանք պատանդ պահած էր: Ծոցի ղեկավարները սակայն նաեւ հարց տուին, որ արդեօք ամերիկեան գրաւումին շարունակութեամբ կարելի պիտի ըլլայ շրջանային կայունութիւն հաստատել:

● ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ, որ երկփեղկուած էր Իրաքի պատերազմին պատճառով, երէկ վերամիացուց շարքերը յայտարարելով, որ Սատտամի ձեռքաւորութիւնը ճակատագրական քայլ մըն է Իրաքի մէջ խաղաղութիւն հաստատելու ճամբուն վրայ: Ե. Միութեան նախագահու

Շարք՝ էջ 10

## «ԹՐՔԱԿԱՆ» ԿԻՊՐՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅՈՅՍ ՉԵՆ ՆԵՐՇՆՉԵՐ ԽԱԳԱԳՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Յոյն եւ թուրք կիպրացիներուն միջեւ խաղաղութեան բանակցութիւններուն շուտով վերսկսելու հաւանականութիւնը անիրականաւոր կը թուի, նկատի առած Կիպրակի օրուան ընտրութիւններուն արդիւնքները թրքական Կիպրոսի մէջ: Յիշեալ արդիւնքները մեծ առաւելութիւն չտուին Եւրոպական Միութեան հակամէտ ուժերուն, որոնք կը գործեն խորհրդարանին մէջ:

Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ ըսաւ, որ երկու ամիս ետք թերեւս նոր ընտրութիւններ տեղի ունենան, եթէ Կիպրակի օր ընտրուած խորհրդարանը չկարենայ նոր կառավարութիւն մը կազմել: Նոր խորհրդարանին մէջ ուժերը հաւասար են. նախկին կառավարութիւնը ունի 25 արժ, ընդդիմադիրներն ալ ունին նոյն թիւը: Հետեւաբար, դժուար թէ կարելի ըլլայ կառավարական ընկերակցութիւն մը կազմել:

Ե. Միութիւնը կը յուսար, որ ընդդիմադիր կուսակցութիւնները յաղթանակ ապահովեն, որպէսզի կա-

րելի ըլլայ խաղաղութեան բանակցութիւններուն վերսկսել:

Յոյն կիպրացիները ողջունեցին ընտրութիւններուն արդիւնքները իբրեւ ապտակ մը ուղղուած Տենքթաշի, որուն դաշնակից կուսակցութիւնները շլաքողեցան մեծամասնութիւնը ապահովել նոր խորհրդարանին մէջ: Կիպրոսի կառավարութիւնը վերստին պատրաստակամութիւն յայտնեց վերսկսելու խաղաղութեան բանակցութիւններուն, որոնց նպատակն է վերամիացնել երկուքի բաժնուած կղզին:

Թրքական Կիպրոսին հովանաւոր Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտալլա Կիլ իր կարգին ըսաւ, որ ընտրութիւններուն արդիւնքները ցոյց կու տան, թէ Հիւսիսային Կիպրոսի ժողովուրդը կ'ուզէ լուծել կղզիին տագնապը, սակայն ոչ ի գին ամէն ինչի եւ ամէն զոհողութեան: Կիլ վերստին շեշտեց, որ Անգարա յանձնառու է Կիպրոսի տագնապին յարցալուծում մը ապահովելու ծրագիրներուն:

(ԱՖՓ)

## ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ՑԱԲԱՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ ԿԸ ՅՂԵ ԻԼՅԱՍ ԱԼԻԵՒԻ

### ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵՒԻ ՅԱՆՉՆՈՒԵՑԱՒ ՀՈՂԻՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան ցաւակցական նամակ մը յղած է Արարիչի նախագահ Իլիամ Ալիեւին՝ անոր հօր՝ Արարիչի նախկին նախագահ Հայտար Ալիեւի մահուան առիթով:

Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք իր կարգին Իլիամ Ալիեւի յղած ցաւակցական գիրին մէջ նշած է, թէ Հայտար Ալիեւի մահուան լուրը ընկալած է «խոր ցնցումով եւ վշտի զգացումով»: «Ես բարձր կը գնահատեմ անոր համարակցութիւնը, իմաստութիւնն ու վճռակամութիւնը, որոնք դրսեւորուած են մեր հանդիպումներուն ընթացքին, յատկապէս դարաքաղեան տագնապի խաղաղ լուծման ընտրանքի քննարկման ընթացքին», նշած է Շիրաք: Ֆրանսայի նախագահը նշած է, թէ այս առումով Հայտար Ալիեւի քաղաքականութիւնը պէտք է շարունակուի, եւ թէ Արարիչի նոր նախագահը միշտ կրնայ ակնկալել Ֆրանսայի աջակցութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ուղղուած ջանքերուն:

Հայտար Ալիեւի մահուան առնչութեամբ ցաւակցական հեռագիր մը յղած է նաեւ Միացեալ Նահանգներու նախագահ Ջորժ Պուշ: Ան յայտնած է, թէ «երկար ատեն Հայտար Ալիեւ գլխաւոր դէմքն էր հարաւային Կովկասի մէջ»: Պուշ ընդգրկած է Հայտար Ալիեւի անձնական դերը ամերիկեացի պայքարողական ռազմական թէ տնտեսական յարաբերութիւններու ամրագրման մէջ:

«Խաղաղ բանակցութիւններու միջոցով Լեռնային Ղարաբաղի տագնապի արդար եւ մնայուն լուծման հասնելու ուղղութեամբ անոր դրսեւորած վճռակամութիւնը կարեւոր նշանակութիւն ունեցաւ շրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան պահպանման մէջ», նշած է Պուշ իր ցաւակցագիրին մէջ:

## ԱԼԻԵՒԻ ԹԱՂՈՒՄԸ

Հապարտոր պարպէյճանցիներու մասնակցութեամբ երէկ Պաքուի մէջ տեղի ունեցաւ Արարիչի նախկին նախագահ Հայտար Ալիեւի թաղումը:

Ութսունամեայ Ալիեւին մահը յայտարարուած էր անցեալ Ուրբաթ օր, Միացեալ Նահանգներու Քլիվլենտ (Օհայօ) քաղաքի հիւանդանոցներէն մէկուն մէջ, ուր ան կը գտնուէր ամիսներէ ի վեր եւ կը տառապէր սրտի հիւանդութենէ:

Ալիեւ, որ նախկին Խորհրդային Միութեան օրերուն Համայնավար կուսակցութեան մէջ վարած է բարձրաստիճան պաշտօններ, իր ընդդիմադիրներուն կողմէ նկատուած էր բռնատէր մը, որ կը յաջողէր իշխանութեան վրայ մնալ ընտրութիւններ խարախելով եւ իր քաղաքական հակառակորդները ապօրինի միջոցներով ճնշելով:

Հայտար Ալիեւի յուղարկութեան մասնակցեցան Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին, Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիպ Էրտողլան, Ղապախտանի նախագահ Նուրուլլան Նախապետ, Ուրբանիոյ նախագահ Լեոնիդ Քոչմա, Վրաստանի նախկին նախագահ Էտուարտ Շեւարտնաձե, վրացի ընդդիմադիր ղեկավարներ Նինօ Պուրճանաձե եւ Միխայիլ Սահակաշվիլի, Միացեալ Նահանգներու նախագահ Ջորժ Պուշի խորհրդական Պրէնթ Սքաուֆորթ:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՎԵՐԵԼՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ.

### ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱՎԵՐՆՈՒԹԻՒՆԸ

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՄԲ ՄԵԿՆԵՑԱԻ ԱԹԵՆՔ

ԱԹԵՆՔ, 15 (ԱՖՓ).— Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ, որ պաշտօնական այցելութեան մը համար Աթէնք պատու Երկուշաբթի օր, յայտնեց, թէ մտահոգ չէ, որ իր երկիրը կրնայ Իրաքին յաջորդել իբրեւ երկրորդ թիրախը ամերիկացիներուն:

Ասատ ըսաւ, որ ինչ որ տեղի կ'ունենայ Իրաքի մէջ, կը վերաբերի Իրաքի, ոչ թէ Սուրիոյ: Ան աւելցուց, որ Սուրիան Իրաք չէ: Ասատ կը խօսէր Յունաստանի խորհրդարանի նախագահ Ափոսթոլոս Գազաւմիսիսի հետ ունեցած հանդիպումի մը աւարտին: Ասատ շեշտեց, որ Իրաքի հարցը տարբեր է եւ թէ հոն տեղի ունեցածը որեւէ ձեւով չ'առնչուի Սուրիոյ:

### ՍՈՒՐԻԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԻՆ ԸՆԴԴԻՍԱՑՈՂ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշի կողմէ՝ Սուրիան հաշուետուութեան կանչող օրինագիծի ստորագրութեան դէմ յառաջացած ալիքը շարունակուեցաւ երէկ։

Երեսփոխաններ եւ պատկան մարմիններ դիտել տուին, թէ նման որոշում մը կը հարուածէ ոչ միայն Սուրիան, այլեւ՝ ամբողջ արաբական վարչակարգը։ Անոնք շեշտեցին, որ անհրաժեշտ է նեցուկ կանգնիլ Սուրիոյ՝ անոր դէմ եղած ամբաստանութիւններուն եւ սպառնալիքներուն միասնաբար դիմադրելու համար։

Որոշումին դէմ արտայայտուեցան երեսփոխաններ Ատնան Արաքճի, Ռուսամ Սաատ, Մոհամետ Քապպանի, Պասէմ Եամուր, ձորճ Նաժար եւ նախկին երեսփոխան Պահա Տին իթանի։

Անոնք շեշտեցին, թէ նման որոշումի որդեգրումը չափանիշ է այն երեւոյթին, թէ Սուրիան՝ Ենթարկուի իսրայէլեան եւ ամերիկեան ճշումներուն եւ կառչած կը մնայ իր սկզբունքներուն եւ քաղաքականութեան։ Երեսփոխանները կոչ ուղղեցին արաբական աշխարհին՝ պահպանելու Սուրիոյ եւ միասնաբար դիմադրելու ոչ միայն Սուրիոյ, այլեւ ամբողջ արաբական երկիրներուն սպառնացող վտանգը։

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Էլպիս Եագուպեան  
Տէր եւ տիկին Յարութիւն Եագուպեան եւ զաւակները՝ տղայ՝ Աւետիս եւ Սիլվա

Տէր եւ տիկին Նշան Պետրոսեան եւ զաւակները  
Տիկին Ջարուհի Մաթոսեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Հրայր Թաւուզեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Մայր Թաւուզեան եւ զաւակը՝ Կէրի

Տէր եւ տիկին Ջաւէն Ծէօնճեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Յակոբ Ծէօնճեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Սիւրբէր Աճարեան եւ զաւակը  
Պարսուճեան ընտանիք  
Գարեգեան ընտանիք  
Քօչկէրեան ընտանիք  
Օհանեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, եղբոր, հորեղբոր եւ հարազատին՝

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ (Ծնեալ՝ Այնթապ, 1921ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան։

Յուզարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 14 Դեկտեմբերին, Ֆրրոյ Շրպայէթի Ազգային գերեզմանատան մէջ։

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ։
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Խանտըք Էլ Ղամի բաղ, Երեքշաբթի 16, Չորեքշաբթի 17 եւ Հինգշաբթի 18 Դեկտեմբերին։

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Անժէլ Սարգիսեան եւ դուստրը՝ Սօսի  
Տիկին Վարդան Սարգիսեան  
Տէր եւ տիկին Գօգօ Ճեմանեան եւ դուստրը՝ Վանայ  
Տէր եւ տիկին Մարգար Թումանյան եւ զաւակները  
Տիկին Լուսին Խարթեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Էլիսա Յարութիւնեան եւ զաւակները  
Երէցկին Պայծառ Ազիւնուճեան  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հոր, եղբոր, մեծ հոր, աներոջ, քեռայրին եւ հարազատին՝

### ՍԵՐՈՒ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 13 Դեկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 3:45ին, յետ կարճատեւ հիւանդութեան։

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 13 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը։

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ։
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը։ Հեռ. 01-242996 եւ 03-830036։

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Անժէլ Գանտիլեան  
Տէր եւ տիկին Արարհամ Գանտիլեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Վահէ Գանտիլեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Վիգէն Գանտիլեան եւ զաւակները  
Տիկին Մարգրիտ Պարոնեան եւ զաւակները  
Օրդ. Ազնիւ Գանտիլեան  
Տէր եւ տիկին Մանուկ Գանտիլեան եւ զաւակները  
Տիկին Վերթին Էթիմէճեան եւ զաւակները  
Տիկին Արպերա Գանտիլեան եւ զաւակները  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հոր, եղբոր, մեծ հոր եւ հարազատին՝

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՆՏԻԼԵԱՆԻ (Ծնեալ՝ Հալէպ, 1928ին)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 13 Դեկտեմբեր 2003ին, կէսօրին։

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 14 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Հայէպի Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ։

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ։

### ԼԻՔԱՆԱՆԵՒՍՈՒՐԻԱԿԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԸԱՐՑԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ

Լիբանանեւսուրիական ընկերային հարցերու միացեալ յանձնախումբը երէկ Դամասկոսի մէջ գումարեց ժողով մը, նախագահութեամբ ընկերային հարցերու պետական նախարար Ասատ Տիպի եւ Սուրիոյ ընկերային հարցերու եւ աշխատանքի նախարար Սիհամ Տըլլուի։ Ներկայ գտնուեցաւ նաեւ Լիբանանեւսուրիական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի խուրի։

Հանդիպումին ընթացքին խօսք առաւ նախարար Տիպի, որ վեր առաւ Լիբանան-Սուրիա գործակցութեան եւ հեղափոխութեան պատմական արժանատիները եւ շեշտեց, որ յանձնախումբը ամէն ջանք պիտի ընէ՝ գործադրելու Լիբանանի եւ Սուրիոյ նախագահներ զօր. Էմիլ Լահուտի եւ Պաշար Ասատի կողմէ հովանաւորուած համաձայնագիրը։

Տիպի ընդգծեց, որ առանց ընկերային մարզին անդրադառնալու՝ քաղաքականութիւնը անիմաստ է եւ կը մնայ խօսքի սահմաններուն մէջ։

Իր կարգին, նախարար Տըլլու շեշտեց առանց որեւէ ջանք խնայելու կարիքատրներուն ծառայելու անհրաժեշտութիւնը, շարունակ գործակցելու Լիբանանի հետ։

Միւս կողմէ, իր խօսքին մէջ Նասրի խուրի շեշտեց նշեալ յանձնախումբի կատարած միացեալ ժողովներու կարեւորութիւնը, նկատել տալով, որ Լիբանան-Սուրիա գործակցութեան իբրեւ արդիւնք շատ բան իրականացած է քաղաքական մարզին ներս, ինչպէս՝ շրջանային սպառնացող մարտահրաւերներու դիմաց միացեալ կեցուածքի որդեգրումը։

խուրի յանձնախումբէն պահանջեց աշխատանքը յաւելեալ լրջութեամբ շարունակել, կարենալ ստեղծելու համար ընկերային առողջ իրավիճակ։

Տիպի Դամասկոս գտնուելու առիթով այցելեց նաեւ Սուրիոյ վարչապետ Մոհամետ Նաժի Օրարիի։

### ԻՐԱՔԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՏՏԱՄ ՀԻՒՄԷՅՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐ

Իրաքի նախկին նախագահ Սատտամ Հիւսէյնի ձեռքարկութեան գծով լիբանանցի անձնատուութիւններ եւ քաղաքական գործիչներ պանապան կեցուածքներ եւ արտայայտութիւններ ունեցան։

Գլխաւոր արտայայտուողներէն եղաւ նախկին վարչապետ Սելիմ Հըս, որ խօսելով Իրաքի նախկին նախագահին մասին ըսաւ, թէ ան բռնատէր էր եւ չխնայեց ունեւնի, որ սպառնաց խնայարէ իր բռնատիրութիւնը։ Ան աւելցուց, թէ Սատտամ մեծ աւերներ գործած է իր երկրին մէջ եւ իր ժողովուրդին, ու դրացի երկիրներուն հաշուոյն, սակայն այսօր եւս կացութիւնը նախանձելի չէ Իրաքի մէջ եւ իրաքի ժողովուրդը տակաւին կը տառապի բռնազարաւոյ ուժերու լուծին տակ։

Այս մասին արտայայտուողներու կարգին էր շէյխ միւֆթի Քապպանի, որ դիտել տուաւ, թէ բռնատէր Սատտամի ձեռքարկութեամբ սեւ էջ մը կը դարձուի եւ իրաքի ժողովուրդին միասնականութեան եւ համագործակցութեան նոր էջ մը կը բացուի։ Շէյխը ըսաւ, թէ արաբական երկիրները պետք է միասնաբար դէմ դնեն ամերիկեան բռնազարաւումին եւ պահպանեն իրենց անկախութիւնը, որոնք այս հանգրուանին կարիքը ունին ապրելու իրենց երկրին մէջ ու ապահովութիւն եւ ինքնավարութիւն ունենալու։

### ԼԻՔԱՆԱՆԻ ՍԱՏՏԱՄԻ ԿԻՆԸ ԼԻՔԱՆԱՆ ՉԻ ԳՏՆՈՒԻՐ

Ներքին Ապահովութեան Ընդհանուր տնօրէնութիւնը երէկ հերքեց շրջան ընող այն լուրերը, ըստ որոնց, Իրաքի նախկին նախագահ Սատտամ Հիւսէյնի կինը Լիբանան կը գտնուի՝ Սամիրա կամ Խատիժա Շահպանտար կամ Ժապանտար անունով։ Անոնք դիտել տուին, թէ Լիբանանեան սահմաններուն վրայ այս իմաստով ոչ մէկ ապօրինի դէպք արձանագրուած է։

### ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԾԻՆՈՒԹԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ Կաթողիկոսարանը որոշած է 70 յարկաբաժիններ ներառող չորս շէքեր շինել Ֆանարի «Լէյլաման» համալիրին կից գտնուող հողաշերտին վրայ։ Ծիմութիւնները պիտի սկսին Յունուար 2004ին եւ պիտի աւարտին շուրջ մէկ տարին։ Յարկաբաժինները պիտի ըլլան երկու չափի՝ երկու սենեակ - մէկ հիւրասրահ եւ մէկ սենեակ - մէկ հիւրասրահ, իրենց յարակից բաժիններով։ Ծիմութեան որակը պիտի ըլլայ միջակէ վեր։

Մեր ժողովուրդի զաւակներուն ցուցաբերելիք հետաքրքրութեան լոյսին տակ յարկաբաժինները թէ՛ ծախելու, թէ՛ վարձու տալու կարելիութիւններ պիտի ստեղծուին։

Շտաբըրընողները կրնան ներկայանալ Կաթողիկոսարանի դիւանապետ պրո. Նաջիլ Տոտեանին, Աթիլիասի Մայրավանքը, թուականս մինչեւ 15 Յունուար 2004, ամէն օր ժամը 10:00ԵՃ 12:00:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ԽՕՍԵՅԵԱԼՔ ԲՐԻՍՈՒՆ ՊԱՆՈՍ ԸՆԴ ՆՃԱՆ ԱՖԱՐԵԱՆ (ԸԱՆԵՃԵԱՆ) 14 ԴԵԿՏԵՄԵՐ 2003

Կանանց հազուստի վաճառատան մը համար վաճառող օրհորդ մը, ժէլ Էլ Տիպի շրջան։ Կեռ. 04-713998:

### ԾԱՆՈՒ ԸՈՂ ԼՈՒՍԱՆԱԿՈՒՄ ԼԵԻՈՆ ԹԱՇՃԵԱՆ ԿԱՍՏՅՈՐ ՍԻՐԻ ՎՐԱՄԱՆՈՒՄ «Ազգակ»-ին

Բացման հանդիսութիւնը փոքի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «ԱՂԱԼԵԱՆ»-Ը.Ը.Մ.՝ մարզաշահութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ։

Ծանօթ. Յուզարկաւորութիւնը պիտի շարունակուի Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 4:00ԵՃ մինչեւ երեկոյեան ժամը 8:00

### ՌՈՒՄԻԷԻ ՄԵՋ ԾԱԳԱԾ ՄԵԾ ՀՐԳԵՀ ՄԸ ԽԼԵՑ 14 ՁՈՀ

Կերպրնկալի ճարտարարուեստի գործարանի մը մէջ (Ռումիէ) ծագած հրդեհին պատճառով, երէկ, 14 գործաւորներ, որոնք գործարանին մէջ գիշերած էին, մահացան, իսկ երկու ուրիշներ վիրաւորուեցան։

Առաւօտեան ժամը 1:30ին սկսած հրդեհը «կոլ տուաւ» Արա Պետրեանի պատկանող գործարանը։ Ըստ ապահովութեան ուժերու փոխանցած տեղեկութիւններուն, հրդեհը ծագած էր առաջին յարկէն, ուր կը գտնուէին դիրաւայրող նիւթեր, պապ տարածուած՝ ամբողջ շէնքին մէջ։ Հրդեհներու բոլոր փորձերը՝ փրկելու կացութիւնը, անցան ապարդիւն։

Հրդեհին բուն պատճառը ցարդ յստակ չէ։ Բացուած է հետաքննութիւն։

### ԴԱՐՁԵԱԼ «ՆԻՈՒ. ԹԻ. ՎԻ.»-Ի ՀԱՐՑ

Տեղեկատուութեան ազգային խորհուրդը երէկ գումարեց ժողով մը, որուն ընթացքին դիտել տուաւ, թէ «Նիւ. Թի. Վի.» Ուրբաթ, 13 Դեկտեմբերի իր լուրերու հաղորդման ընթացքին խախտած էր լրատուական օրէնքները։ Անոնք հարցը քննարկելէ ետք յայտնեցին, թէ տեղեկատուութեան նախարարին պիտի առաջարկեն կայանին նկատմամբ անհրաժեշտ քայլերու դիմել եւ որոշումներ կայացնել։

### ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՂԹԱԾՐԱՐԻՆ ՀԱՐՑԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԲՆՆԱՐԿՈՒԻԼ

Դատախաչ Ատնան Ատտուլ երէկ տեղեկացաւ էլեկտրականութեան թղթածրարին վերջին նորութիւններուն մասին եւ ան քննարկեց տարուող աշխատանքն ու գործընթացը։ Ան դիտել տուաւ, թէ հարցաքննութիւնները կը շարունակուին այն անձերուն, որոնց անունները նշուած են թղթածրարին մէջ եւ յառաջիկայ շաբթուան ընթացքին յաւելեալ քայլեր պիտի առնուին այս առնչութեամբ։

ՄՈՆՕ ԹԱՏԻՈՆ  
ԾՆՆԴԵԱՆ ԸԱՍԵՐԳ  
Կատարողութեամբ՝  
**ԳԻՈՐԳ ՔԷՐԷՄԵԹԼԵԱՆԻ**  
(Պարիթոն)

**ՔԱՄԻԼԱԻ**  
(Դաշնամուր)

Եւ Ըամազգայինի «ԿԱՐԿԱՉ» երգչախումբին  
Խմբավար՝ **ՉԱՔԱՐ ՔԷՇԻՇԵԱՆ**  
ԵՐՈՊՊԱԿԱՆ ԸՈՂԵՒՐ ԵՐԳԵՐ  
ԵՒ ՌՈՍԱՆՍԵՐ

Շաբաթ, 20 Դեկտեմբեր 2003,  
Երեկոյեան ժամը 8:30ին,  
«Մոնո» թատերասրահին մէջ,  
«Սեն ժոզէֆ» համալսարանի փողոց, Պէյրութ,  
հեռ. 01-202422:

### ՇԻՐԱԿ

ՏՊԱՐԱՆ • ՀՐԱՏԱՐԱԿԸԱՏՈՒՆ

Առեւտրական Տպագրութիւն  
Այցետոմսեր - Նամակի Թուղթեր - Պահարաններ  
Թուղթեր - Հաշուեցոյցներ - Ստացագիրներ  
Որձազրկներ - Պիտակներ - Կնիքներ - Ելվ.

Միութեան կանոնադրական  
Տպագրական Աշխատանքներ  
Յայտագիրներ - Հրատարակումներ - Օրացոյցներ  
Վիճակցոյցներ - Վկայականներ - Տարեգրքեր  
Պարբերաթերթեր - Ելվ.

Հարսանեական Քաղտերու Ճոխ Հաւաքածոյ

Հարպոյեան Կեդրոն • Bloc C • Համուտ • Հեռ. 01 253008  
Բնակարանի Աշխատանք • Սրագ Ապասարկութիւն • Սերտուած Գիներ

Հոգաւորութեամբ՝ **ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ**  
(Առաջատար Լորատու Հայոց Թատր)

Նախագահութեամբ՝ **ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ**  
ԼՈՒՍԱՆԱԿՈՒՄ ԵՒ ՅՈՒՑԱՐԱՆԴԵՍ - ԿԱՃԱՌԸ

### ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ

Լոռապատկան **ԼԵԻՈՆ ԹԱՇՃԵԱՆ**

Կաստիլիոյ պիտի տրամադրուի «Ազգակ»-ին

Բացման հանդիսութիւնը փոքի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «ԱՂԱԼԵԱՆ»-Ը.Ը.Մ.՝ մարզաշահութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ։

Ծանօթ. Յուզարկաւորութիւնը պիտի շարունակուի Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 4:00ԵՃ մինչեւ երեկոյեան ժամը 8:00

# ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ԳՆԱՇԱՏԵ ԹԵՕ ԶՈՒԻ ԱՃԽԱՏԱՆԵՐ Ի ՆՊԱՍՏ ԸԱՅ ԴԱՏԻՆ

Երեկ, ժրնեի մէջ հողին յանձնուեցաւ Հայ Դատի շերտ պաշտպաններէն դոկտ. Թէօ Չու: Թայ Թէօ Չու մասնագիտութեամբ ընկերաբան է եւ երկար տարիներ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդէն ներս աշխատած է: Ան ծովէն ծանօթ է Հայերու Յեղասպանութեան եւ իր վերջին գիրքին մէջ «Ethnic conflict and religion» կարեւոր տեղ յատկացուցած է Հայերու Յեղասպանութեան եւ հայ ժողովուրդի իրաւունքներուն, նաեւ ինք այս նիւթին շուրջ պանապան առիթներով դասախօսութիւններ տուած է:

Իր ցաւակցական նամակին մէջ, որ կարդացուեցաւ թաղման ընթացքին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ

Ա. կաթողիկոս կ'ըսէ. «Թէօ Չու եղաւ մեծ աստ-ւածաբան ու ընկերաբան: Անոր կեանքը պայ-քար մը եղաւ ի խնդիր Աւետարանական արժէք-ներու եւ ճշմարտութիւններու վկայութեան: Ոչ միայն զինք գնահատած եմ իբրեւ միջեկեղեցա-կան շարժումի ռահվիրաներէն մէկը, այլ նաեւ՝ իբրեւ հայ, իր մէջ տեսած եմ հայ ժողովուրդի իրաւունքներու շերտ պաշտպանը: Ան իր վեր-ջին գիրքին մէջ յատկապէս խօսելով Հայերու Յե-ղասպանութեան մասին կ'ըսէ, թէ «երբ ան ան-պատիժ մնայ, ծնունդ պիտի տայ նոր Յեղաս-պանութիւններու»: Նոյն գիրքին մէջ վեհափառ հայրապետը կ'ըսէ. «Յարգել Թէօ Չուին յիշա-տակը, կը նշանակէ գործօն մասնակցութիւն քե-րէյ մեր հաւաքական պայքարին ի խնդիր մարդ-կային իրաւունքներու վերականգնման»:

Յայտնենք, որ թաղման նաեւ իր խօսքը ար-տասանեց ԵՎԽԻ ընդհանուր քարտուղարը, ինչ-պէս նաեւ Չուիցերիայէն կարեւոր անձնաւորու-թիւններ:

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄԲ ...

Շարունակուած Ա. Էջէն

Աստ ղիտել տուաւ, որ Սուրիա գործօն դերակատարութիւն կ'ունենայ մի-ջազգային գետնի վրայ, յատկապէս խա-ղաղութեան վերաբե-րող հարցերու եւ ահա-բեկչութեան դէմ պայ-քարի մէջ: Աստ շեշ-տեց նաեւ, որ Դամաս-կոս լաւ կապեր ունի Եւրոպական Միու-թեան հետ:

Յունաստանի նա-խագահ Քոսթիս Սթե-ֆանփուլոս Ասատի հետ տեսակցութեան ատարին ըսաւ, որ Սուրիա դատապար-տած է ահաբեկչու-թիւնը եւ կրնայ գոր-ծակցիլ այլ երկիրնե-րու հետ՝ պայքարելու համար անոր դէմ:

● ԻՐԱՆ դատապար-տեց Սուրիան հաշուե-տուութեան կանչելու ամերիկեան օրինազի-ծի ստորագրութիւնը, որ կը փաստէ թէ Ռա-շիկիլըն մենատիրու-թիւն կ'ուզէ հաստա-տել ամբողջ աշխար-հին վրայ: Կառավա-րութեան բանբեր Ապ-տալլա Ռամեզանյան ըսաւ, որ այսպիսի վարուելակերպ անըն-դունելի է միջազգա-յին ընտանիքին մէջ:

## «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրնե-րու ընթերցում՝ արա-բերէն
- 8:45 «Աստղեր»
- 9:40 «Օրուան տոմ-ար»
- 10:45 «Ի՞նչպէս կը տօնէք». այսօրուան հիւրըն է երեսփոխան Զայսար Սուաուան
- 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրնե-րու ընթերցում՝ հայե-րէն
- 1:30 Շայաստան-եան լուրեր
- 3:00 «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)
- 3:10 Արաբերէն յայ-տագիր.
- հարցազրոյց դերա-սան եւ լրագրող ժո-ղէֆ Խալիլի հետ. կը խօսի պատկերասփի-ռի իր գործերուն մա-սին եւ կանդորադա-նայ 2003ի յայտագիր-ներուն
- 6:50 «Օրուան տոմ-ար» (կրկնութիւն)
- 7:05 «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)
- 8:00 «Դալար բար-տի». հայերէն հարա-զատ երգի մատուցում

البيروت  
السفير  
الدمشق  
الجزيرة  
المستقبل  
الاتحاد

## ԻՆՉ ԿԸ ԳԻՆԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ

15 Դեկտեմբերի լի-բանանեան օրաթեր-թերուն գլխաւոր լուրը կը հանդիսանար Իրա-քի նախկին ղեկավար Սատտամ Հիւսէյնի ձեռքաւորութիւնը:

Պ ա ղ է ս ո ի ն է ա ն տագնապն ու անոր լուծման միտող փոր-ձերը, Քորէյի եւ Շարո-նի միջեւ հանդիպում մը կայացնելու նախա-պատրաստական աշ-խատանքները կը շարունակեն հետաքրք-րել օրաթերթերը:

Տեղական իրադար-ձութիւններու կարգին օրաթերթերը լուսար-ձակի տակ առած են նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ վարչա-պետ Հարիրիի միջեւ Պաապտայի տեսակ-ցութիւնը:

«Սանտէթայն»-ի հա-ղորդած լուրերուն հա-մաձայն, Սատտամ Լի-բանան գտնուող իր կնոջ հետ մնալուն կա-պի մէջ էր:

«Սաֆիր»-ի համա-ձայն, Սատտամ առանձին էր... բռնագը-րաւորներուն յանձ-նուելու փոսին մէջ: Իրաքցիները ուրախա-ցան եւ տօնեցին Սատ-տամի ձեռքաւորու-թիւնը, մինչ Քերքուքի մէջ նոր պիտի արձա-նագրուեցան:

«Նահար» օրաթեր-թը հարց տուած է, թէ Սատտամի երկրորդ տապալումով արդեօք պատերապմը վերջ կը գտնէ», թէ կ'երկարի:

թշնամին չի նկատեր: Ըստ «Լիուա»-ի, մինչ Պուշ կը ստորագրէ Սուրիոյ դէմ պատժա-միջոցներու որդեգրու-ման որոշումը, Սու-րիոյ նախագահ Պաշ-շար Ասատ Քոնկրէսի պատուիրակութեան հետ կը քննարկէ ան-կեղծ բանակցութիւն-ներ ծաւալելու կարե-լիութիւնները:

«Անուար» ղիտել տուած է, թէ Ասատ պաշտօնական այցե-լուրեամբ ձափոն կը մեկնի եւ կը յայտարա-րէ, թէ կացութիւնը կը վատթարանայ սիւայ քաղաքականութեան պատճառով:

Ըստ «Սաֆիր»-ի, նա-խագահ Ասատ քննա-դատեց խաղաղու-թեան առնչութեամբ եղած երեսակայական նախաձեռնութիւննե-րը եւ նշեց, թէ Ամերի-կա Սուրիոյ թշնամին չէ:

## ՍԱՏՏԱՄ ՀԻՒՍԵՅՆԻ ԶԵՐԲԱՎԱԼՈՒԹԻՒՆԸ

«Լիուա» գրած է, թէ Իրաքի մէջ պատկերը փոփոխութեան են-թարկուեցաւ եւ Սատ-տամ ներկայացաւ գերիի դերին մէջ: Պուշ չի նախատեսեր յարձակումներու կա-սեցում, մինչ 3 պայ-ցումներ կրկին կը ցնցեն Պաղտատը:

Ըստ «Մուսթաք-պալ»-ի, պատերապմին ընդդիմադիրները կ'ողջունեն Իրաքի նախկին նախագահին ձեռքաւորութիւնը:

Թերթը նշած է, թէ իրաքցիներէն ոմանք հիացան, իսկ ուրիշ-ներ ուրախացան իրենց նախկին նախա-գահին ձեռքաւորու-թեան լուրով:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Պուշ կը խոստանայ դատել Սատտամը, սակայն չի նախատեսեր յարձա-կումներու ատարը: Թերթը գրած է, թէ Սատտամ երկրորդ անգամ ըլլալով յանձնուեցաւ, սակայն առանց դիմադրու-թեան:

«Տիար» ղիտել տուած է, թէ Սատտամ անձնասպան չեղաւ, այլ յանձնուեցաւ առանց դիմադրու-թեան: Պուշ յայտարա-րեց, թէ չարքարանքի սենեակներուն վերջ դրուեցաւ այս ձեռք, իսկ իրաքեան փո-խանցման խորհուրդը յայտնեց, թէ Սատտամ շատ յոգնած է, սա-կայն չէ վաշտացած իր արարքներուն հա-մար:

Ըստ «Անուար»-ի, Սատտամ Հիւսէյնի ձեռքաւորութեան մը նոր հարցադրումներ կը ծագին եւ նոր ման-րամասնութիւններ կը բացայայտուին:

Թերթը նշած է, թէ

«Լիուա»-ի համա-ձայն, Ռամալլայի մէջ երկու նախատակներ կ'արձանագրուին եւ Համասի հիմնադրու-թեան առիթով կանգը-ւածային քայլարշաւ-ուն կը կայանակերպը-ւին: Սաքըրֆիլտ կ'աշխատի իսրայէլ-եան - պաղեստինեան հանդիպում մը կայացը-նելու, իսկ Շարուն որոշ ծամանակաշրջանի մը համար կը հրաժարի միակողմանի որոշում-ներէն:

«Քիֆահ Արապի» ղիտել տուած է, թէ Իս-րայէլ կը մեղմացնէ Պուշի մտավախու-թիւնները եւ կը նշէ, որ ներկայիս միակողմա-նի քայլերու պիտի չշրջի:

«Անուար»-ի համա-ձայն, պաղեստինեան իսրայէլեան հանդի-պում մը կը կայանայ ամերիկեան հովանա-ւորութեամբ, խաղա-ղութեան քարտէսի քննարկման եւ հաշ-տութեան կայացման փորձերով:

Այսլորդանանի եւ Կապայի մէջ իսրայէլ-եան ուժերուն կողմէ յառաջացած կրակնե-րը կ'այրեն 5 պաղես-տինցիներ, գրած է «Անուար»:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

«Մ ու ս թ ա ք պ ա յ » գրած է, թէ Մուսթաքաք համոզուած է, որ Պուշ պիտի չգործադրէ իր ստորագրած որոշու-մը, իսկ Ասատ նշած է, թէ հակառակ ամէն ին-չի, Սուրիա Միացեալ Եւրոպայի հետ իր

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵՆՔ

«Լիուա» նշած է, թէ Հարիրի Պաապտայի մէջ կը փորձէ բարելա-ւել կացութիւնը, որ-պէսզի կարելի ըլլայ ակելի դիրքին լուծման հասնիլ:

Ըստ «Մուսթաք-պալ»-ի, Սուրիոյ դէմ ստորագրուած որոշու-մին դէմ պաշտօնա-կան եւ ժողովրդային շրջանակներ յայտնե-ցին իրենց բողոքը, իսկ Հարիրի յայտնեց, թէ ակելի արդիւնաւետ է Ռաշիկիլընի եւ Դա-մասկոսի միջեւ երկ-խօսութեան ծաւալու-մը:

Թերթը գրած է, թէ Լահուտ - Հարիրի հանդիպումը կը միտի մթնոլորտը դրականի վերածել:

«Նահար»-ի համա-ձայն, վարչապետին եւ նախագահին հանդի-պումը դրական մթնո-լորտի ստեղծման յոյ-սեր կը ներշնչէ:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Ատտուժ նոր տեղեկութիւններ կը փոխանցէ «Մատի-նա» դրամատան մէջ եղած վեղձարարու-թիւններուն մասին, իսկ նախագահներուն հանդիպումը վերցս-տին կ'աշխուժանայ:

«Տիար» նշած է, թէ նախագահ Լահուտի հետ հանդիպում ունե-նալէ ետք, վարչապետ Հարիրի Ֆրանսա պի-տի մեկնի Շիրաքի հետ տեսակցելու հա-մար:

**ALEXANIAN EXCHANGE**  
Bourj-Hammoud - Armenia Street  
Tel.: (01) 252952 - 252852 - (03) 270755

### 2004՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ

Ինչպէս ծանօթ է մեր ժողովուրդին գաւակնե-րուն, 2003 տարին Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթո-ղիկոսին կողմէ հռչակուած էր «Աստուածաշունչի Տարի»: Ներկայ տարուան ընթացքին թէ՛ Անթի-լիասի Մայրավանդին եւ թէ՛ մեր թեմերուն մէջ գա-նազան ձեռնարկներու եւ աշխատանքներու ձա-նով վերարժեւորուեցաւ Աստուածաշունչին առանց-քային դերը մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Քաջալերուած՝ մեր ժողովուրդի գաւակներուն ցուցաբերած ընդառաջումէն, ինչպէս նաեւ մեր հա-ւաքական կեանքին մէջ ընտանիքին կենսական տե-ղը ու դերը լուսարձակի տակ բերելու նախա-ձեռնարկութեամբ, վեհափառ հայրապետը 2004 տա-րին հռչակեց «Հայ Ընտանիքի Տարի»: Այս ուղ-ղութեամբ վեհափառ հայրապետը յատուկ պատ-գամ մը պիտի ուղղէ մեր ժողովուրդի գաւակնե-րուն, եւ դարձեալ յառաջիկայ տարուան ընթաց-քին մեր թեմերուն մէջ գանազան ձեռնարկներու ձաճով պիտի վերաշնչուի հայ ընտանիքին վի-ճակուած կարեւոր առաքելութիւնը:

Վեհափառ հայրապետին պատգամը պիտի կար-դացուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորչի Մայր տաճարին մէջ, յառաջիկայ Կիրակի, 21 Դեկտեմ-բեր 2003ին, յընթացք Սուրբ եւ անմահ պատարա-գին:

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի գաւակներուն՝ ներկայ գտնուելու Ս. պատարագին եւ հետեւելու վեհափառ հայրապետի հռչակագիրի ընթերցման:

ԴԻՒՄՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### Գրատուն ՈՍԿԵՂԱՐ VOSKETAR Bookstore





★ Մանկական ԱԲԳ եւ հեքիաթներ:

★ Հռչակաւոր բառարաններ Oxford, Longman, Larousse:

★ Երագներու բանալի նոր լոյս տեսած Երագահան, հոգեբանական եւ հոգեվերլուծական տրեւալներով:

Պուրճ Գամուտ, Ս. Փրկիչ Եկեղեցւոյ կից, Գեռ.: 01/264750  
E-mail: vosketar@yahoo.com

### Մի՛ մոռնար խնդրելու կաղանդ Պապայէն ՊՁՏԻԿ - ԱՁՏԻԿ գաւաթը, Նոր Տարուան լաւագոյն նուէրը




Գաւաթները կարելի է գտնել հետեւեալ գրախանութներուն մէջ.

- Բամպգային, «Ճաղոյեան» Կեդրոն,
- Պուրճ Բամուտ
- Նարեկայի, Պուրճ Բամուտ
- Obellx, Անթիլիաս

## TOGETHER WE ARE STRONGER

### ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ



ԱՖՀԻԼ AFHIL  
Armenian Mutual Fund  
Tel / Fax: 01 242556 - 242557

### Շ. Յ. Դ. ԶԱԲԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

## ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՇԱՆԴԵՍ

Մասնակցութեամբ՝ «ԿՈՍԻՏԱՍ» ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻՆ ԵՒ ԵՐԳԻՉ ՅՈՎԱԵՓԻ

Տեղի կ'ունենայ Գործընթացի, 24 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 9:00ԵՆ սկսեալ, «ՏԵԼԼԵԼՈՒՄ» ձաշարանին մէջ, Մամուլային:

● Տոմսերը ստանալու համար դիմել՝ Ըամազգայիցի գրախանութ, «Ճաղոյեան» Կեդրոն:

Սակ՝ 30 \$



ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՉՆԵՐՈՒ ՄԷՋ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ԿԸ ՅՂՈՒԻՆ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԱԳՐԳՈՂ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐ

Միացեալ Նահանգներու Հ. Յ. Դ. Հայ Դատի յանձնախումբը անցնող շաբաթ սկսաւ իր «2004ի քուէարկողներու դատարարական ծրագիր»ը, որուն ծիրին մէջ Հարցաթերթիկներ կ'ուղարկուին նախագահական եւ փոխնախագահական թեկնածուներուն հայրենիքէն շահագրգռող հարցերուն նկատմամբ անոնց դիրքորոշումներուն ծանօթանալու նպատակով: Հարցաթերթիկներուն հարցումները առաւելաբար կը վերաբերին Հայկական Յեղափոխութեան Ամբիկայի կողմէ ճանաչման, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ամերիկեան զօրակցութեան, Ազրպէյճանի տրամադրութիւնը ամերիկեան օժանդակութեան պայմաններուն, Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումին, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքին, պետութեան մէջ ամերիկահայերու մասնակցութեան եւ այլ հարցերու: Հարցաթերթիկներուն պատասխանները ընտրութիւններուն նախօրեակին պիտի բաժնուին ամերիկահայերուն, որպէսզի վերջիններս ծանօթանան իւրաքանչիւր թեկնածուի դիրքորոշումներուն: Հայ Դատի յանձնախումբը Միացեալ Նահանգներու մէջ 2004ին տեղի ունենալիք ընտրութիւններուն գծով իր կեցուածքը պիտի ճշդէ: Հարցաթերթիկներու պատասխաններուն հիման վրայ:

Յիշեցնենք, որ նման հարցախոյզ պատրաստուած էր նաեւ նախորդ ընտրութիւններուն ընթացքին եւ անոնց պատասխաններուն հիման վրայ Գոնիքի անդամ ընտրուած էին Հայ Համայնքին զօրակցութիւնը վայելող թեկնածուներուն մեծ մասը:

ԸՍՏ ՀԱՆՏՈՂՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԿ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐ ՊԻՏԻ «ԲՆՆԵՆ» ՀԱՅՎԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ ԿԸ ՀԵՐԲԵՆ

Թուրքիոյ պատմագիտութեան խորհուրդի նախագահ Երուստիան Հայաճօղլու յայտարարած է, որ 2004ին վիեննայի համալսարանի հովանաւորութեամբ Հայ եւ թուրք պատմաբաններ համադիպումներ պիտի ունենան ուսումնասիրելու Հայ Նշխարական Հարցը եւ մասնաւորաբար «1915ի դէպքերը»:

«Վիեննայի համալսարանը հրաւեր ուղղեց նաեւ Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի նախագահութեան: Ան սկզբունքով առաջարկը ընդունեց, սակայն տակաւին չյայտնեց, թէ ո՞վ պիտի մասնակցի քննարկումներուն», ըսած է Հայաճօղլու:

Միւս կողմէ, սակայն «Երկիր» կը հաղորդէ, որ Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիան ցարդ նման առաջարկ-հրաւեր ստացած է: Այս մէկը հերքած են նաեւ Հայ պատմաբանները: Աւելին՝ արեւելագիտութեան հիմնարկի թրքագիտութեան բաժանմունքի պատասխանատու Ռուբէն Մաֆրատեան նշած է, որ 1915ի Յեղափոխութիւնը վիճելի չէ եւ Հայ պատմաբանները Յեղափոխութեան վերաբերող բանակցութիւններու երբեք չեն մասնակցիր:

Հակառակ Հայ պատմաբաններուն անտեղեկ ըլլալուն, սակայն Հայաճօղլու արդէն իսկ խանդավառ է: Ան յայտնած է, թէ Հայկական կողմէն պաշտօնական դրական պատասխան ստանալէ ետք երկու կողմերը իրարու արիւններ եւ փաստաթուղթեր պիտի ուղարկեն եւ զանոնք քննելէ ետք վիեննայի մէջ պիտի հաւաքուին հարցը «ճշմարտութեան» հանդիպումի մը ընթացքին քննելու: «Այս հանդիպումը կարելի է նկատել ըտլոր խաղաթուղթերու բացայայտումի առիթ: Մենք առաջին անգամ ըլլալով միասնաբար պիտի արծարծենք հարցը», ըսած է ան: Ան աւելցուցած է, որ հանդիպումին պիտի մասնակցին ինք եւ պատմագիտական խորհուրդի Հայկական ամպիոնի նախագահ Հիքմէթ Էօզտեմիր:

ՖՐԱՆՍԱՅԻ ԳԵՄ ԳԱՏ...

Մինչ թրքական լրատուամիջոցներ լուսարձակի տակ առած են 2004ին վիեննայի մէջ ենթադրաբար տեղի ունենալիք հանդիպումին վերոյիշեալ լուրը, «Չաման» թերթը 8 Դեկտեմբերին հաղորդեց, որ Մարդկային իրաւանց եւրոպական ատեանը ընդունած է թուրք փաստափան Օրհան Պեքմեզճիի ներկայացուցած Ֆրանսայի դէմ դատ բանալու դիմումը՝ վերջինիս կողմէ Հայկական Յեղափոխութեան ճանաչման պատճառով: Ըստ Չամանի, ատեանը փաստաբանին թելադրած է Հայկական ազգային Յեղափոխութեան վերաբերեալ փաստաթուղթեր եւ վկայութիւններ հաւաքել: Պեքմեզճի, որ Ֆրանսային 171 միլիոն եւրո հատուցում կը պահանջէ, այժմ կը փորձէ ակախտեսներ գտնել՝ «փաստելու», որ Յեղափոխութեան «պնդում»ը անհիմն է:

«ԱՉԳԱԿ»-Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիր խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՉԳՆԵՐԸ Բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչև ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԻՑ

«Արմէնփրէս» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, թէ Հայաստանի Դեմոկրատական կուսակցութեան նախագահ եւ Արդարութիւն» խմբակցութեան պատգամաւոր Արամ Սարգսեան 11 Դեկտեմբերին լրագրողներուն հետ հանդիպումի մը ընթացքին յայտարարած է, որ Միացեալ Նահանգներու «Քեթերինկ» հիմնադրամի նախաձեռնութեամբ եւ Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ նախագահութեամբ, Հայաստանի, Ազրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի «հասարակութեանց ներկայացուցիչները» վերջին երեք տարիներուն ընթացքին 5 հանդիպումներ ունեցած են: Լեռնային Ղարաբաղի տազնապին գծով երկխոսութիւն ծաւալելու նպատակով: Հանդիպումներուն հակադէմ կողմէն մասնակցած են Սուրէն Զոյրեան եւ Արամ Սարգսեան, Լեռնային Ղարաբաղէն սկզբնական շրջանին մասնակցած է այժմու արտաքին գործոց նախարար Աշոտ Ղուկաս, եւ այլափոփ: Արեւստար Մախաթեան եւ Ռուբէն Զարգարեան: Ազրպէյճանական կողմէն հանդիպումներուն մասնակցած է նախկին արտաքին գործոց

նախարար Թոֆիք Զուլֆուկարով: Հանդիպումներուն մասնակցած են նաեւ Ռուսիայէն եւ Միացեալ Նահանգներէն մասնագէտներ: Ըստ Ա. Սարգսեանի, այժմ պատրաստուած է տեմբերին լրագրողներուն հետ հանդիպումի մը կ'ամփոփէ այդ հանդիպումներուն արդիւնքները: Անոր հաւաստիացումով, փաստաթուղթեր ներկայացուած է Միւսքի խմբակի համանախագահներուն, որոնք իրենց կարգին ընդունած են զայն օգտագործել բանակցային գործընթացին մէջ: Ինչ կը վերաբերի փաստաթուղթին, ան կը կոչուի «Հայաստանի, Ազրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջանի խաղաղարար գործընթացի նախագիծ»: Անոր մէջ տեղ գտած են հանդիպումներուն ընթացքին ներկայացուած առաջարկները: Փաստաթուղթը կ'ենթադրէ բանակցութիւններու գործընթացի վերսկսում, եթէ մասնակցած է այժմու արտաքին գործոց նախարար Աշոտ Ղուկաս, եւ այլափոփ: Արեւստար Մախաթեան եւ Ռուբէն Զարգարեան: Ազրպէյճանական կողմէն հանդիպումներուն մասնակցած է նախկին արտաքին գործոց

նախարար Թոֆիք Զուլֆուկարով: Հանդիպումներուն մասնակցած են նաեւ Ռուսիայէն եւ Միացեալ Նահանգներէն մասնագէտներ: Ըստ Ա. Սարգսեանի, այժմ պատրաստուած է տեմբերին լրագրողներուն հետ հանդիպումի մը կ'ամփոփէ այդ հանդիպումներուն արդիւնքները: Անոր հաւաստիացումով, փաստաթուղթեր ներկայացուած է Միւսքի խմբակի համանախագահներուն, որոնք իրենց կարգին ընդունած են զայն օգտագործել բանակցային գործընթացին մէջ: Ինչ կը վերաբերի փաստաթուղթին, ան կը կոչուի «Հայաստանի, Ազրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջանի խաղաղարար գործընթացի նախագիծ»: Անոր մէջ տեղ գտած են հանդիպումներուն ընթացքին ներկայացուած առաջարկները: Փաստաթուղթը կ'ենթադրէ բանակցութիւններու գործընթացի վերսկսում, եթէ մասնակցած է այժմու արտաքին գործոց նախարար Աշոտ Ղուկաս, եւ այլափոփ: Արեւստար Մախաթեան եւ Ռուբէն Զարգարեան: Ազրպէյճանական կողմէն հանդիպումներուն մասնակցած է նախկին արտաքին գործոց

ԱՉԳԱԿԻ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ «ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ» ԿԵՑՈՒՄԵՒ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐ ԱՉԳԱԿԻ ԶԻ ՓԱՓԱԲԻՐ ԱՆԴԱՄԱԿՑԻԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԸ ՈՐՈՒՆ ԱՆԴԱՄ Է ՆԱԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ



Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիեւ 10 Դեկտեմբերին Մոսկուայի մէջ տեղի ունեցած ԱՊՀ-ի երկիրներու պաշտպանութեան նախարարներու մամուլի միացեալ ասուլիսին ընթացքին յայտնած է, թէ Ազրպէյճան չի կրնար անդամակցիլ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան, այնքան ատեն որ անդամներէն մէկը (ակնարկը՝ Հայաստանի) կը շարունակէ «բռնագրաւած» պահուիլ երկրի մը տարածքները: «Հայկական զինեալ ուժերը Ազրպէյճանի հողը բռնագրաւած են: Հայաստան պայմանագիր ստորագրողներէն մէկն է, եւ մենք չենք կրնար այդ երկիրն հետ այդպիսի պայմանագրի մը մաս կապել: Ան յայտնած է, որ իբրեւ ԱՊՀ-ի երկիր՝ Ազրպէյճան քանիցս բարձրացուցած է այս հարցը, սակայն ան տակաւին կը մնայ անլոյծ»:

«ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ» ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆՀԵՒԹԵՐ ՅԱՅԱՍՏԱՐՈՒԹԻՒՆԸ Միւս կողմէ, Սայսիս կոչուած ազրպէյճանական «Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութիւն»ը յայտարարած է, որ ազրպէյճանցի պատգամաւորները պէտք է հրաժարին Սկովտիոյ մէջ տեղի ունենալիք Հաւաքական կազմակերպութեան խորհրդարանականներու հանդիպումին, որովհետեւ կը նախատեսուի քննարկել նաեւ Հայ-ազրպէյճանական յարաբերութիւններուն վերաբերող հարցեր: Կազմակերպութեան համոզումով, հանդիպումը կը հակասէ Ազրպէյճանի շահերուն: Հակառակ կազմակերպութեան յայտարարութեան, սակայն, Ազրպէյճանի խորհրդարանի պատգամաւոր Սիւսիւն Նովրուզով յայտնած է. «Այդ յայտարարութիւնը իրենց անձնական ինդիրն է. ես այդպէս չեմ կարծեր»:

ՄԱՀԱԿԱՇՎԻԼԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՄԱՍՆԱԾԻՒՂ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄԷՋ

«Ա-ԻՆՖՕ» լրատու գործակալութիւնը 8 Դեկտեմբերին հաղորդեց, որ Միխայիլ Սահակաշվիլիի ղեկավարած «Ազգայնական Շարժում» կուսակցութիւնը ձեռնարկած է նախագահական ընտրութիւններին առաջ մասնաճիւղեր հիմնել այն շրջաններուն մէջ, ուր ցարդ ներկայացուցչութիւն չունի: Այդ ծիրին մէջ մասնաճիւղ մը պիտի բացուի նաեւ Ախալքալաքի մէջ:

«Ա-ԻՆՖՕ» լրատու գործակալութեան նախագահ Իրինա Սարիվիլի-Չանտուրի յայտարարած է, որ 23 Նոյեմբերին վրաստանի մէջ տեղի ունեցած ընտրութիւններուն յաղ- նախագահական ընտրութիւններէն առաջ մասնաճիւղեր հիմնել այն շրջաններուն մէջ, ուր ցարդ ներկայացուցչութիւն չունի: Այդ ծիրին մէջ մասնաճիւղ մը պիտի բացուի նաեւ Ախալքալաքի մէջ:

Պաքո-Թիֆլիս-ձէյհան քարիւղատարը եւ Պաքո-Թիֆլիս-էրզրում կազատարը Հայաստանէն անցընել, իսկ Հայ ղեկավարները ուղղակի կատարեցին իրենց առաջարկունած յայնձնարարութիւնը», նշած է ան:

